

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԴԱԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Հուլիսի 31-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բադալ Մուրադյանը կառավարական տանը ընդունում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այցելությունը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի միջև տեղի է ունենում ջերմ զրույց, որին ներկա է լինում Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը:

Զրույցի ժամանակ Հայոց Հայրապետը Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահին հաղորդում է սփյուռքի հայրենակարոտ հայ ժողովրդի ողջույններն ու բարեմաղթությունները և պատմում տպավորություններ Իր արտասահմանյան ուղևորությունից: